

ԱՄԱՆՈՐԸ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

1994 Յունուար 13, Հինգշաբթի գիշեր ժամը 7-8.30, Ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահը զարդարուած էր կաղանդի զարդարանքով, եւ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն հետ մուտք գործեց, ի ներկայութեան ուսուցիչներու, Ս. Աթոռոյ հրաւիրեալ պաշտօնէութեան եւ աշակերտութեան որոնք երգեցին Վարժարանի «Սիրտ ի Սիրտ» ֆայլերը:

Ամանորի ամբողջ յայտագիրը, զգեստաւորեալ Կաղանդ Պապայով, կաղանդչէֆերու ընթերցանութեամբ, սրամտութիւններով, նուէրներու բաշխումով, մենբերգներով, խմբերգներով եւ արտասանութիւններով, գործադրուեցաւ իբրեւ բեմադրութիւն եւ աշակերտներու կողմէ պատրաստուած դերակատարութիւն, ղեկավարութեամբ Գեորգ Սրկ. Բաբայանեանի: Նոր Տարուան ուղերձը կարդաց Վարժարանի դաստիարակ-հսկիչ Բրոֆ. Արտեմ Սարգիսեան: Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր զեփեմանքով, ֆաջալերանքով խօսքերէն եւ բոլոր պաշտօնէութեան ուղղած բարի մաղթանքներէն յետոյ, «Հայր Մեր»-ի երգեցողութեամբ երեկոյթը աւարտեցաւ: Իսկ կէս գիշերուան ժամը 12ին, ամբողջ ֆաղափի զանգակներուն հետ, Ս. Յակոբայ մեծ եւ փոքր զանգակները եւս սկսան դողանքել, մինչ աշակերտներ եւ ժողովուրդ վանքին մեծ բակը հաւաքուած կ'երգէին «Փառք ի Բարձունս» օրհներգութիւնը, եւ լուսարարապետ Գեորգ Ս. Դաւիթ Արք. Սահակեան Նոր Տարին կը շնորհաւորէր, մաղթելով որ խաղաղութիւնը հաստատուէր խոոված բոլոր երկիրներուն մէջ:

Միաբանութեան հոգեւորական անդամները, Ժառ. Վարժարանի Ամանորի երեկոյթէն յետոյ Պատրիարքարան հաւաքուեցան եւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ միասին ընթրիք ունեցան մտերմիկ գուարթաբանութեամբ եւ երգեցողութեամբ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐ

Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցան հետեւեալ մշակութային յայտագիրները.-

1993 Դեկտեմբեր 11, «Մահմետական Ազգային Փոքրամասնութիւններու Բոնի Ազգաճուղումը Ատրպէյջանի մէջ». զեկուցող՝ Վարդան Գրիգորեան: Վիտէօ ֆիլմի ցուցադրութիւն՝ 1. Արցախը Շուտացուց աչքերով. 2. Շուշիի գրաւումը:

1993 Դեկտեմբեր 18, «Արցախ-Ղարապաղի բարբառը», զեկուցող՝ Արտեմ Սարգիսեան:

1994 Յունուար 4, Անգլերէն լեզուով դասախօսութիւն՝ «Սիամանթօյի Կարմիր Լուրեր Բարեկամէս» ֆերթուածներու մասին, Ամերիկայէն Անգլիագիր հայ բանաստեղծ Փիթըր Պալագեանի ներկայացումով:

1994 Յունուար 15, Պարոյր Սեւակ, կեանքն ու ստեղծագործութիւնները. զեկուցող՝ Սամուէլ Մուրատեան:

1994 Յունուար 29ին եւ Փետրուար 5ին, երկու երեկոյթներ՝ Ա) «Կոմիտասի Հանճարը իր Գիտերուն եւ Երգերուն մէջէն», Թորգոմ Պատրիարք Մանուկեան, եւ «Կոմիտասէն ընտրուած երգեր», Մեներգող՝ Վարուժան Մարգարեան, Դաշնակի բաժին՝ Վաչէ Շարաֆեան:

1994 Յունուար 31, Փետրուար 2 եւ 3, երեք դասախօսութիւններ Անգլերէն լեզուով, «Մէկ Եկեղեցի - Բազում Պաշտամունք», «Պատարագ եւ Խորհուրդներ», «Տաղերգութիւն». զեկուցող՝ Բրոֆ. Ֆիլիպպ Հարմոնիքուրթ, Աւստրիոյ Կրաց Համալսարանի դասախօս:

1994 Մարտ 28, Ուշինկընի մէջ Կաթուղիկ Եպիսկոպոսներու Խորհուրդի պատասխանատու պաշտօնեաներէն Տէր. Տօթօրիս Լէֆի ներկայացուց Անգլերէն լեզուով, կարեւորութիւնը Եկեղեցւոյ աշխարհական անդամներուն հոգեւոր կրթանքին: